

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-22/1**

ք. Երևան

27. 02. 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (Երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Երևանի թենիսի և բաղմինքների մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Կիլիկիա>> մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 2023 թվականի հուլիսի 15-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբը համարվում է կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրության հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանով, որ առկա են տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համապատասխան պայմանագրի և շինարարության թույլտվությունը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանում կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ

սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 597 040 500 (հինգ հարյուր իննսուներեք միլիոն քառասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 99 506 750 (իննսուներեք միլիոն հինգ հարյուր վեց հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է և շինարարության ողջ ընթացքում պահպանում է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի գնից՝ մինչև 45%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները: Կանխավճարը տրամադրվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.4.1 Կանխավճար կտարամադրվի և/կամ կատարողական ակտերը կընդունվեն միայն այն դեպքում, երբ առկա է տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցող կազմակերպության գրավոր հավաստումն այն մասին, որ Կապալառուի կողմից իրականացված են շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրան կից վճարման պահանջագրի բանկային տվյալներին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ հատկացված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են


Երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովուման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041143
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



Լ. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Թիվ 1 շինվարչություն» ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115001487111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝


(ստորագրություն)

Հ. Մնացականյան



Երևանի թեմիսի և բաղմինթոնի մանկապատանեկան մարզադպրոցը համայնքային ոչ առևտրային կազմակերպության
«Կիլիկիա» մարզադահլիճի շենքի հիմնանորոգում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Ապամոնտաժման աշխատանքներ, Քանդման և ուժեղացման աշխատանքներ				
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Փայտե դռների քանդում	քմ	64.0	2670.0	170880.0
2	Այլումինե կարկասով ապակեպատ վիտրաժի ապամոնտաժում	քմ	258.0	4440.0	1145520.0
3	Փայտե պատուհանների ապամոնտաժում	քմ	35.3	3130.0	110489.0
4	Դռների և պատուհանների մետաղյա ճաղավանդակների ապամոնտաժում	քմ	56.6	1330.0	75278.0
5	Դահլիճում ծածկին ամրացված լուսատուների ապամոնտաժում	հատ	72.0	5950.0	428400.0
6	Օժանդակ մասում առաստաղին ամրացված լուսատուների ապամոնտաժում	հատ	34.0	4565.0	155210.0
7	Գունավոր մետաղակրմիդրից տանիքի ծածկույթի ապամոնտաժում	քմ	591.0	820.0	484620.0
8	Տանիքային թիթեղից ծածկույթի քանդում	քմ	1554.0	900.0	1398600.0
9	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /վերին և ներքին գոտիներ/	քմ	2145.0	1580.0	3389100.0
10	Մարզադահլիճի 60x60մ փայտածոցերից հատակի ապամոնտաժում	քմ	1375.0	1480.0	2035000.0
11	Մարզադահլիճի փայտյա հատակի տակ 60x60 մմ փայտյա տափազերանների ապամոնտաժում	գծմ	2308.0	530.0	1223240.0
12	Մանրատախտակից հատակների քանդում	քմ	91.0	940.0	85540.0
13	Տախտակյա հատակի ապամոնտաժում	քմ	106.0	770.0	81620.0
14	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	3.0	845.0	2535.0
15	Լվացարանների ապամոնտաժում	հատ	3.0	680.0	2040.0
16	ԶԿ և ջեռուցման պողպատյա ցանցի ապամոնտաժում	գծմ	125.0	465.0	58125.0
17	Թիթեղյա թասակների և պատուհանագոգերի ապամոնտաժում	գծմ	136.0	125.0	17000.0
18	Պոկված բազալտե աստիճանաքարի ապամոնտաժում և նույնի վերատեղադրում	գծմ	25.0	7225.0	180625.0
19	Բետոնե հիմքով եզրաքարերի քանդում	գծմ	54.0	1350.0	72900.0
	Քանդման և ուժեղացման աշխատանքներ				
20	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափի վրա 0.5մ3 շերտի տարողությամբ	խմ	28.5	1400.0	39900.0
21	Նույնի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	խմ	28.5	7160.0	204060.0
22	Տանիքում ապակյա բամբակից ջերմամեկուսիչ շերտի քանդում	քմ	1472.0	775.0	1140800.0
23	Տանիքում շաքից ջերմամեկուսիչ շերտի քանդում	խմ	98.4	7980.0	785232.0
Հ	Ծածկի ասբոշիֆերյա շերտի քանդում	քմ	1466.0	910.0	1334060.0
25	Խճանկարհատակի քանդում	քմ	112.2	2380.0	267036.0
26	Խեցեսալե հատակի քանդում	քմ	65.5	650.0	42575.0
27	Ծածկույթների տակի թեթև բետոնի հիմնատակի քանդում	խմ	56.0	24860.0	1392160.0
28	Քարերից շարված պատերի քանդում	խմ	123.5	19210.0	2372435.0
29	Քարե պատերի քանդում 400 մմ հաստությամբ (բացվածքների իրականացում)	խմ	22.5	19210.0	432225.0
30	Բետոնյա միջնորմների քանդում հարդարման շերտի հետ միասին	խմ	39.0	29000.0	1131000.0
31	Պատերի կերամիկական սալիկապատվածքի քանդում	քմ	37.2	1200.0	44640.0
32	20մմ հաստ. հին գաջի սվտի քանդում պատերից շարված կանոնավոր ձևի քարերով	քմ	410.0	1620.0	664200.0
33	Պատերի հարդարման շերտի քերում	քմ	465.0	550.0	255750.0
34	Սրբատաշ տուֆ քարերից շարվածքի քանդում	քմ	51.6	5890.0	303924.0
35	Սոսատաղների գաջե սվաղի քանդում	քմ	291.0	1100.0	320100.0
36	Սոսատաղի (ՈՒՄՔ) հարդարման շերտի քերում	քմ	199.6	550.0	109780.0
37	Մարզադահլիճում ծածկի պողպատյա երեսարկի մանրացում և հեռացում	տն	0.8	36710.0	28266.7
38	Բազալտե սալահատակի քանդում	քմ	74.1	3877.0	287285.7
39	Սափալտե սալվածքի քանդում 100 մմ հաստությամբ	խմ	51.0	6210.0	316710.0

40	Քանդվող ծածկի սալերի անվտանգ աշխատանքների կատարման նպատակով տախտակամածի իրականացում (տակից)	քմ	36.0	15660.0	563760.0
41	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի քանդում	խմ	4.4	36460.0	158965.6
42	Միաձույլ ե/բետոնե հենարանների քանդում 12հատ	խմ	4.4	36460.0	158601.0
43	Գոյություն ունեցող խամքարաբետոնի քանդում	խմ	3.3	19210.0	63393.0
44	Գոյություն ունեցող մետաղական կապերի ապամոնտաժում 63x63x6մմ անկյունակներից և ներդիր էլեմենտներից	տն	2.7	65000.0	178295.0
45	Մետաղյա ներդիրների մոնտաժում	տն	0.4	450000.0	198000.0
46	Նոր մետաղական կապերի մոնտաժում 140x140x9մմ անկյունակներից	տն	4.8	480000.0	2321280.0
47	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ ներկում մուգ մոխրագույն ներկով	քմ	1730.0	2110.0	3650300.0
48	Տախտակամածի տեղադրում և ապամոնտաժում մինչև 10 մ բարձր.	քմ	1355.0	3130.0	4241150.0
49	Միաձույլ ե/բետոնե նոր պարզունակի կառուցում B-25 դասի բետոնով	խմ	10.0	107050.0	1070500.0
50	Ամրան	տն	2.4	553330.0	1327992.0
51	Միաձույլ ե/բետոնե հենարանի կառուցում նոր պարզունակի տակ B-25 դասի բետոնով (հիմք, պատ)	խմ	9.5	97500.0	926250.0
52	Ամրան	տն	1.4	553330.0	788495.3
53	Գոյություն ունեցող պարզունակների քայքայված հատվածների վերականգնում գ/ավազի շաղախով 3սմ	քմ	14.3	4480.0	64064.0
54	Գոյություն ունեցող պարզունակներում անցքերի բացում L=400մմ Φ26մմ "Hilti" (канцyna) խարխալների տեղադրում	հատ	44.0	17510.0	770440.0
55	Միաձույլ ե/բետոնե նոր պլոնների պատրաստում B-25 դասի բետոնով	խմ	6.7	118000.0	790600.0
56	Ամրան	տն	1.2	553330.0	658462.7
57	Միաձույլ ե/բետոնե նոր պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնով	խմ	13.0	105050.0	1365650.0
58	Ամրան	տն	3.1	553330.0	1726389.6
59	Միաձույլ ե/բետոնե նոր միջուկների պատրաստում B-25 դասի բետոնով	խմ	0.6	118000.0	70800.0
60	Ամրան	տն	0.1	553330.0	39839.8
61	Միաձույլ ե/բետոնե գոտիների պատրաստում B-15 դասի բետոնով	խմ	2.8	76770.0	214956.0
62	Ամրան	տն	0.3	553330.0	185918.9
63	Պատերի տորկրետ 60մմ հաստ. նախնական մշակումով ավազաշիջային ապարատով	քմ	540.0	10860.0	5864400.0
64	Ամրանային ցանցի տեղադրում պատերի վրա 3Յր-1 լարից	տն	0.3	879800.0	295612.8
65	Սալերի ուժեղացում B-25 դասի բետոնով 0.00 նիշում	խմ	25.0	126700.0	3167500.0
66	Ամրան	տն	3.5	553330.0	1949381.6
67	Տանիքի ծածկի սալերի ուժեղացում B-25 դասի բետոնով	խմ	54.2	126700.0	6867140.0
68	Ամրան	տն	5.1	553330.0	2812576.4
69	Արտաքին աստիճաններ և թեքահարթակ B-15 դասի բետոնով	խմ	33.0	84520.0	2789160.0
70	Ամրան	տն	0.2	553330.0	112879.3
71	Դրսի բետոնյա հիմքի քանդում	խմ	4.0	65310.0	261240.0
72	Միաձույլ ե/բետոնե նոր հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնով	խմ	2.3	89730.0	206379.0
73	Ամրան	տն	0.6	553330.0	305438.2
74	Միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-25 դասի բետոնով 3հատ L=5380մմ	խմ	0.7	118000.0	76700.0
75	Ամրան	տն	0.1	553330.0	44266.4
76	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա և տեղափոխում 13կմ	տն	1003.8	5450.0	5470611.9
Ընդամենը: Ապամոնտաժման աշխատանքներ, Քանդման և ուժեղացման աշխատանքներ					74346249.8
Պատեր, միջնորմներ, Տանիք, Հատակներ, Ներքին հարդարում, Բացվածքներ				0.0	
Պատեր, միջնորմներ					
77	Գրունտի փորում արտաքին պատերի երկայնքով 0,25խմ շերտի տարողության էքսկավատորով, կողիցք	խմ	110.0	1038.0	114180.0
78	Նույնը, ձեռքով	խմ	30.0	3560.0	106800.0
79	Գրունտի ետլիցք ձեռքով, տուփանումով	խմ	140.0	1719.0	240660.0
80	Արտաքին պատերի և պարապետների շարում 200 մմ բետոնյա սնամեջ բլոկներով	խմ	70.0	32837.0	2298590.0
81	Ամրան Φ6, Φ8A240C	տն	0.4	553330.0	193665.5
82	Բլոկների անցքերի լցափակում B-15 դասի թեթև բետոնով	խմ	28.0	45099.0	1262772.0
83	Արտաքին պատերի ակոսների լցափակում գ/ավազե շաղախով	խմ	0.4	51011.0	20404.4
84	Արտաքին պատերի ջերմամեկուսացում 60մմ հաստ. էքստրուդացված փրփրապոլիստիրոլե սալերով, պատին ամրացնելով LITOKOL սոսնձով և պլաստիկ խցաբութակով	քմ	381.5	7040.0	2685760.0

27.12

.2022թ. կնքված N ՀՀԲԿ-ՀՄԱԱԾՁԲ-22/1 գնման պայմանագրի

[Handwritten signature]

85	Արտաքին պատերի երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով, ց/ավազե շաղախով, խարսխումով, 4Bp-1 100x100մմ բջիջով ամրանային ցանցի տեղադրումով և հղկումով	քմ	51.5	29900.0	1539850.0
86	Արտաքին պատերի երեսապատում 40մմ 40մմ հաստ. տրավերտինե սալերով, չժանգոտվող պողպատե կարկասի վրայով (չոր շարվածք)	քմ	242.0	47800.0	11567600.0
87	Արտաքին պատերի սվաղ ց/ավազե շաղախով, մետաղ ցանցի վրայով	քմ	120.0	4803.0	576360.0
88	Արտաքին պատերի դեկորատիվ սվաղ խոշորահատիկ Cerezit-ով, մուգ երանգի	քմ	120.0	7238.0	868560.0
89	Արտաքին գոգորանների երեսապատում 40մմ 40մմ հաստ. տրավերտինե սալերով, չժանգոտվող պողպատե կարկասի վրայով (չոր շարվածք)	քմ	43.8	48200.0	2111160.0
90	Արտաքին պատերի տուֆե մակերեսների հղկում ձեռքով	քմ	250.0	6040.0	1510000.0
Միջնորմներ					
91	Միջնորմների շարում 200 մմ բետոնյա սնամեջ բլոկներով	խմ	20.0	32830.0	656600.0
92	Միջնորմների շարում 100 մմ բետոնյա սնամեջ բլոկներով	քմ	250.0	4400.0	1100000.0
93	Ամրան Փ6, Փ8A240C	տն	0.2	553330.0	124499.3
94	Բլոկների անցքերի լցափակում B-15 դասի թեթև բետոնով	խմ	12.4	45090.0	559116.0
95	Ցնցուղարաններում ալյումինե լամբիրապատ էկրաններ	քմ	45.2	43010.0	1944052.0
Տանիք					
96	Ծածկի իրականացում սենդվիչ պանելով 120 մմ հաստությամբ, գույնը RAL7004	քմ	1520.0	28900.0	43928000.0
97	Տանիքաձածկույթի կառուցման աշխատանքներ, 9 մմ հաստությամբ OUP սալի տեղադրումով՝ երկու կողմից SBS բիտումային պրայմերի պատումով: ջրամեկուսիչ 1-ին շերտ՝ SBS մոդիֆիկացված բիտումային գլանափաթեթ 3կգ/քմ պոլիէթեր հիմքով, ճկունության գործակիցը R=25մմ-15°C, ջերմակայունությունը +90°C: ջրամեկուսիչ վերին շերտ "CM6" բիտումային կոմինդրով (մոդիֆիկացված բիտում 1.3 կգ/քմ պարունակությամբ, 9կգ/քմ) շահագործման երաշխիքային ծամկետը 40 տարի: Ներառյալ կորագիծ եզրերում 0.5 մմ հաստությամբ գունավոր թիթեղից արցունքաթափերի տեղադրումը	քմ	1560.0	24200.0	37752000.0
98	Գոլորշամեկուսիչ շերտի իրականացում	քմ	514.0	345.0	177330.0
99	Ծածկի ջերմամեկուսացում էքստրուդացված փրփրապոլիստիրոլե հարթասալերով 100մմ հաստ.	քմ	514.0	8400.0	4317600.0
100	Բետոնե շերտ 40-150մմ հաստ. B-12.5դասի բետոնով (թեքության համար)	քմ	514.0	5376.0	2763264.0
101	Ցեմենտի հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	514.0	2900.0	1490600.0
102	Տանիքի ջրամեկուսիչ ձածկույթի իրականացում, 1 շերտ Primer, 1 ստորին շերտ, 1 վերին շերտ, գրանուլապատ	քմ	514.0	5569.0	2862466.0
103	Պարապետի սվաղում ցեմ.ավազե շաղախով	քմ	90.5	2999.0	271409.5
104	Պարապետի ջրամեկուսիչ ձածկույթի իրականացում, 1 շերտ Primer, 1 ստորին շերտ, 1 վերին շերտ, գրանուլապատ	քմ	90.5	5569.0	503994.5
105	Ցվիգի երեսապատում Alucobond-ով, մետաղական կարկասի վրայից	քմ	103.0	32220.0	3318660.0
106	Թասակների պատրաստում 0.6մմ հաստ. գունավոր թիթեղով	քմ	47.0	10266.0	482502.0
107	Կաթաթափերի իրականացում 0.6մմ հաստ. գունավոր թիթեղից	քմ	49.0	10266.0	503034.0
108	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և ապամոնտաժում մինչև 10 մ բարձր.	քմ	530.0	1130.0	598900.0
109	Ջրահեռացման բետոնյա առվակ 200x200 մմ հատույթով	մ	102.0	9390.0	957780.0
Հատակներ					
110	Խճից լիցք հատակի տակ 550մմ հաստ. տոփանումով	խմ	55.8	16490.0	920142.0
111	Հատակի վրա առկա ակոսների լցում B-7,5 դասի բետոնով	խմ	6.4	41660.0	266624.0
112	Բետոնյա նախապատրաստական շերտ 160մմ հաստ. B-7,5 դասի բետոնով	խմ	39.1	41660.0	1628906.0
113	Բետոնյա շերտ միջինը 70մմ հաստ. B-20 դասի բետոնով, մետաղացանցի վրայով 4x4 մ չափերով ջերմային կարանների իրականացումով, կարանները ճկուն նյութով լցափակումով	քմ	1355.0	7480.0	10135400.0
114	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	350.6	1780.0	624068.0
115	Պրեսգրանիտե սալիկներից հատակի իրականացում, սոսնձումով	քմ	350.6	13798.0	4837578.8
116	Պրեսգրանիտե սալիկներից 60մմ բարձր. շրիշակների իրականացում, սոսնձումով	գձմ	127.5	6400.0	816000.0
117	Գորգաձածկույթով հատակների իրականացում (ինքնահարթեցվող շերտի հետ միասին) գորգաձածկույթը Betar Dynasty AB 100% պոլիպրոպիլեն , խավի բարձրությունը 6,5մմ, խավի բաշը 500գր/քմ, ընդհանուր հաստ.8,5մմ, քաշը 1125գ/քմ, լայնքը 400սմ. միացման կարերը սոսնձվում են Eurocol 545 սոսնձով	քմ	1355.0	4820.0	6531100.0
118	Կավոլդինե հատակի ապամոնտաժում	քմ	1355.0	310.0	420050.0

119	Սպորտային հատակների իրականացում 6,2մմ հաստ. Omnisports Reference Multy-Use եռաշերտ պոլիվինիլքլորիդե նյութով, LumaflexEnergy plywood15մմ հաստ. կեղև նրբատախտակի հիմքի վրա, որպես ենթաշերտ տեղադրելով 15մմ հաստ. Tarfoam 60PU foam սպունգ, իսկ դրան որպես նախաշերտ 0,1մմ հաստ. Tarflim 200Polyethilen film պոլիէթիլենային թաղանթ՝ ընդհանուր 36,3մմ հաստ. և 14,6կգ/քմ քաշով ներառյալ սոսինձը, ինքնահարթեցվող շերտը, շրիշակները, ՊՎՔ հատակի համար նախատեսված եռակցման լարերը, ինչպես նաև գծանշումները	քմ	1355.0	49100.0	66530500.0
120	ՄԴՖ-ից շրիշակների իրականացում 60մմ բարձր, ներկումով	գծմ	188.0	1780.0	334640.0
121	ՄԴՖ-ից շրիշակների ապամոնտաժում	գծմ	188.0	519.0	97572.0
122	Գրունտի հարթեցում նկուղում և տոփանում	քմ	300.0	575.0	172500.0
Ներքին հարդարում					
123	Պատերի գիպսոնիտե սվաղ	քմ	1442.3	4560.0	6576888.0
124	Պատերի ց/ա սվաղ	քմ	309.0	4010.0	1239090.0
125	Պատերի երեսպատում պրեսզրանիտե սալիկներով	քմ	320.5	15580.0	4993390.0
126	Շեփույթումների գիպսոնիտե սվաղ	քմ	12.5	7243.0	90537.5
127	Շեփերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով	քմ	28.2	5430.0	153126.0
128	Շեփերի երեսպատում պրեսզրանիտե սալիկներով	քմ	28.2	19270.0	543414.0
129	Պատերի և շեփույթումների ներկում յուղաներկով	քմ	475.0	2583.0	1226925.0
130	Պատերի և շեփերի ներկում ջրակայուն լատեքսային ներկով	քմ	729.0	3190.0	2325510.0
131	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթից, խոնավակայուն 9.5մմ	քմ	263.4	12270.0	3231918.0
132	Առաստաղների գիպսոնիտե սվաղ	քմ	163.1	4958.0	808649.8
133	Առաստաղների ներկում ջրակայուն լատեքսային ներկով	քմ	426.5	3543.0	1511089.5
134	Օդափոխության համակարգի մետաղյա դեկորատիվ երեսարկում 1մմ հաստ. գունավոր թիթեղով հիմնակմախքի վրա	քմ	150.0	47800.0	7170000.0
Բացվածքներ					
135	Ապակեպատ վիտրաժ, M1 համակարգ, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակե փաթեթը 6մմ մոխրագույն կոփված+20+6մմ մոխրագույն կոփված, չբացվող մաս	քմ	232.2	101880.0	23656536.0
136	M1 համակարգով ապակեպատ վիտրաժի ուղղահայաց բացվող փեղկեր էլեկտրական մեխանիզմով (14 հատ), RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակե փաթեթը 6մմ մոխրագույն կոփված+20+6մմ մոխրագույն կոփված	քմ	25.8	141000.0	3637800.0
137	Ներքին ապակեպատ վիտրաժի բացվող դռներ այլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը 12մմ տրիպլեքս, թափանցիկ, կոփված +20+6մմ թափանցիկ	քմ	4.4	141000.0	620400.0
138	Ներքին ապակեպատ վիտրաժի չբացվող մասեր այլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը 12մմ տրիպլեքս, թափանցիկ, կոփված +20+6մմ թափանցիկ	քմ	9.3	90000.0	837000.0
139	Պատուհաններ, թերմոպլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, բացվող, ապակեփաթեթը թափանցիկ	քմ	29.0	115700.0	3355300.0
140	Բարդ փական թերմոպլումինե փեղկի համար	հատ	26.0	25520.0	663520.0
141	Արտաքին ապակեպատ վիտրաժի բացվող դռներ, թերմոպլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը թափանցիկ	քմ	10.2	125600.0	1281120.0
142	Արտաքին ապակեպատ վիտրաժի վերնափեղկ և չբացվող մասեր, թերմոպլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը թափանցիկ	քմ	10.8	90020.0	972216.0
143	Արտաքին խուլ դռներ, թերմոպլումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, լամբիրապատ, ջերմամեկուսացված	քմ	4.2	125600.0	527520.0
144	Ներքին ՊՎՔ պատուհանագոգ 250 մմ լայնությամբ	գծմ	2.5	4500.0	11250.0
145	Արտաքին պատուհանագոգ 0.6 մմ գունավոր թիթեղից	քմ	37.0	4620.0	170940.0
146	50x90x1,5մմ այլումինե խողովակից կարկասի պատրաստում պաշտպանիչ ցանցի և վարագույրերի ամրացման համար RAL7012mat գործարանային փոշեներկումով	գծմ	670.0	5975.0	4003250.0
147	Մանրաբջիղ 20x20մմ մետաղյա պաշտպանիչ ցանց RAL7012mat գործարանային փոշեներկումով	քմ	310.0	3180.0	985800.0
148	Այլումինե վիտրաժների էլեկտրահեռակառավարվող փաթեթային (ռուլոն) վարագույրերի մոնտաժում	քմ	258.0	51120.0	13188960.0
Ընդամենը: Պատեր, միջնորմներ, Տանիք, Հատակներ, Ներքին հարդարում, Բացվածքներ					306505399.8
Օդափոխություն					
149	Կանալային օդամուղ իր պտուտաթվերի կարգավորիչով L=3000 մ3/ժ, H=400 Պա AC Smart Air VKCA 600x350 2.5Kw 4L3 կամ համարժեք	կոմպլ.	2.0	475920.0	951840.0

150	Կանալային օդամուղ կլոր կտրվածքով, իր պտուտաթվերի կարգավորիչով L=600 մ3/ժ, H= 180 Պա AC Smart Air CDF160L կամ համարժեք	կոմպլ.	2.0	57400.0	114800.0
151	Կանալային օդամուղ կլոր կտրվածքով, իր պտուտաթվերի կարգավորիչով L=360 մ3/ժ, H= 150 Պա AC Smart Air CDF125L կամ համարժեք	կոմպլ.	1.0	50020.0	50020.0
152	Սոստաղային օդամուղ AWENTA 125 կամ համարժեք	հատ	2.0	16470.0	32940.0
153	Ճկուն միացում ուղղանկյուն կտրվածքով AC Smart Air կամ համարժեք 600x350	կոմպլ.	4.0	8740.0	34960.0
154	Ճկուն միացում կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф160	կոմպլ.	4.0	3300.0	13200.0
155	Աղմկախլացուցիչ կանալային ուղղանկյուն կտրվածքով AC Smart Air կամ համարժեք 600x300	հատ	18.0	65410.0	1177380.0
156	Աղմկախլացուցիչ կանալային կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф160	հատ	2.0	31320.0	62640.0
157	Աղմկախլացուցիչ կանալային կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф125	հատ	1.0	28740.0	28740.0
158	Օդի հոսքի կարգավորիչ փական ձեռքի կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф200	հատ	9.0	6150.0	55350.0
159	Օդի հոսքի կարգավորիչ փական ձեռքի կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф160	հատ	2.0	5350.0	10700.0
160	Օդի հոսքի կարգավորիչ փական ձեռքի կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф125	հատ	4.0	5180.0	20720.0
161	Օդի հոսքի կարգավորիչ փական ձեռքի, ուղղանկյուն կտրվածքով AC Smart Air կամ համարժեք 600x250	հատ	10.0	8660.0	86600.0
162	Օդի հոսքի կարգավորիչ փական ձեռքի, ուղղանկյուն կտրվածքով AC Smart Air կամ համարժեք 200x100	հատ	4.0	5180.0	20720.0
163	Ճաղաշարի կարգավորիչ փական AC Smart Air կամ համարժեք 550x250	հատ	10.0	12480.0	124800.0
164	Օդի հոսքի հակադարձ փական կլոր կտրվածքով AC Smart Air կամ համարժեք Ф160	հատ	2.0	3060.0	6120.0
165	Օդի հոսքի հակադարձ փական էլ. շարժաբերով AC Smart Air կամ համարժեք 350x150	հատ	2.0	102530.0	205060.0
166	Օդի հոսքի հակադարձ փական էլ. շարժաբերով AC Smart Air կամ համարժեք 250x150	հատ	8.0	100550.0	804400.0
167	Օդի հոսքի հակադարձ փական էլ. շարժաբերով AC Smart Air կամ համարժեք 200x150	հատ	1.0	100050.0	100050.0
168	Օդի հոսքի հակադարձ փական AC Smart Air կամ համարժեք 600x300	հատ	2.0	34690.0	69380.0
169	Արտաքին մետաղական ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 550x200	հատ	2.0	10550.0	21100.0
170	Արտաքին մետաղական ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 350x250	հատ	1.0	8980.0	8980.0
171	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 1800x400	հատ	10.0	47570.0	475700.0
172	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 1500x300	հատ	2.0	31770.0	63540.0
173	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 1400x250	հատ	1.0	26100.0	26100.0
174	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 1100x200	հատ	2.0	18250.0	36500.0
175	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 1000x200	հատ	1.0	16860.0	16860.0
176	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 400x600	հատ	10.0	18150.0	181500.0
177	Կարգավորվող ալյումինե ճաղաշար AC Smart Air կամ համարժեք 550x250	հատ	10.0	12090.0	120900.0
